

մեր ուսուցչութեան մեծագոյն մասը, չկայ այդ առարկան:

Սակայն մենք շատ հեռու գնացինք. դառնանք Յոննանեան դպրոցի վերը յիշուած գեղեցիկ սրոյշմանը:

Իրը լրագրական շուրթերում կարգացինք այդ սրոյշումը, մենք իսկոյն յիշեցինք դպրոցական ամսարային կոյճնիաները, որոնք կազմակերպուած են քաղաքակիրթ երկրներում թուլակազմ աշակերտներու համար: Եթէ չենք սխարուած, Թիֆլիզում ևս գործում է մի նման հաստատութիւն: Թիֆլիզի միջնակարգ դպրոցների թուլակազմ աշակերտներից սրոյ թիւ ուղարկււմ է Մանգլիս ամառանոցը, ուր մի բարերարուհի նուիրել է մի գեղեցիկ ամառանոց և հարկաւոր գումար — այդ ամսարային աշակերտական կոյճնիայի պահպանութեան համար:

Որքան գեղեցիկ և նուիրական գործ:

Բայց մի թէ նման դպրոց, կոյճնիաներ կարելի չէ կազմել քաղաքների մեր դպրոցների համար, մի թէ Թիֆլիզի եկեղ-ձիսական դպրոցները չեն կարող ընդհանուր բիւզջէով մի 20—30 թուլակազմ, օգտախոսութեան անհրաժեշտ կարիք ունեցող աշակերտներին ուղարկել, չենք ասում մի առաջնակարգ ամառանոց, այլ գէթ Լոռուայ կամ Ղաղախի սարերը, առողջ դիւղերը:

Հանդուցեալ Աղէքսանդր Թայրեանը, անցեալի յայտնի հասարակական տիպերից մինը, որ մի ժամանակ Ներսիսեան դպրոցի հոգաբարձու էր եղած, էրը կառուցանում էր Թիֆլիզին մօտ Կօջօր ամառանոցի հայկական եկեղեցին, նրա դաւթում միաժամանակ շինեց մի երկու կալուած, իւրաքանչիւրը 3—4 սենեակից բաղկացած և շարունակ փայտալուծ էր այն ծրագիրը, որ այնտեղ ամառները տարուեն Ներսիսեան դպրոցի որդեգրութիւնը, որ գլխաւորապէս կազմուած էր չքաւոր և թուլակազմ երեխաներից և որին այնքան անհրաժեշտ էր օգտախոսութիւնը փակուած կեանքից յետոյ:

Սակայն այդ խնդիրը, որ այժմ արդէն փոխուել է դպրոցական ամսարային կոյճնիայի— չիրագործուեց. բայց ոչինչ չի արդելում Ներսիսեան դպրոցի կամ Թիֆլիզի ձիսական դպրոցների վարչութեանց միջնորդութիւն անել թեւ, առաջնորդի առաջ և Կօջօրի եկեղեցական շի-

նութիւններից մէկը վերածել դպրոցական կոյճնիայի շինութեան ու այնտեղ ուղարկել Թիֆլիզի աշակերտութեան մի սրոյ տոկոսը:

Որքան էլ աննշան լինի սկզբում կատարածը, այնուամենայնիւ կատարուած կը լինի մի շատ սգաւաւէտ գործ, հիմք դրուած կը լինի մի մեծ հաստատութեան որի բացակայութիւնը շատ դժայի է մեր աշակերտութեան համար մասնաւորապէս:

Գործը դժուար չէ իրականացնել, հարկաւոր է միայն գլխի գնել: Մեզ յայտնի է, որ Կօջօրի եկեղեցու երեցօրիս կոյս (այժմ Մայրապետ) Հռիփսիմէ Թահրեանը նոյնպէս փայտալուծ է իր հանդուցեալ հօր ծրագիրը և նա անշուշտ սիրով ընդառաջ կը գնայ, կաշակցէ, եթէ Թիֆլիզի մեր դպրոցների վարչութիւնները ցանկանան դպրոցական ամսարային կոյճնիա կազմել Կօջօրում:

Հողը պատրաստ է գտնեալ Թիֆլիզում, հարկաւոր է միայն եռանդ այդ գեղեցիկ գործի իրականացման համար:

Մի թէ կը պակասի այդ էլ մեր դպրոցների վարիչներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԻ ՇՈՒՐՁԸ

Հայ հասարակութիւնը իսկապէս հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի հայկական տպագրութեան շրտհարիւրամեակը:

Ամեն կողմից համակրութեամբ են վերաբարեւում դէպի Հայ տպագրութեան այդ մեծ տօնը և ցանկութիւն յայտնում, որ իսկապէս հարկաւոր հանդիսաւորութեամբ կատարուի հայ գրի ու գրականութեան այդ պատմական տօնը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ինչպէս և պէտք էր սպասել, այդ համահայկական տօնի գլուխն է անցել, որը արդէն սրոյշուած է, ներկայ տարուայ նոյնմընը ամսում, սուրբ Սահակ և Մեսրոպի տօնին:

Աւելի յարմար օր դժուար էր ընտրել:

Անհրաժեշտ էր, որ հայկական տպագրութեան տօնը կատարուէր այն մեծ հայրապետ-

ների յիշատակի հետ, որոնք ամենից աւելի մեծ ջանքեր են թափել հայ գրի ու գրականութեան համար, որոնք ստեղծել են տառերն ու սկզբնական գրականութիւնը:

Եւ իսկապէս, միթէ կայ մեզ համար աւելի մեծ անձ, աւելի նուիրական յիշողութիւն, քան հայկական տպագրութեան չորսհարիւրամեակը:

Ահա մի տօն, մի հանդէս, որի չորս կողմը կարելի է համախմբել ամբողջ հայութիւնը առանց խտրութեան:

Լինի նա հայ-լուսաւորչական, թէ հայ-կաթոլիկ, հայ-բողոքական թէ մի այլ կրօնի, մեր տպագրութեան չորսհարիւրամեայ տօնախմբութեանը նա իրաւունք ունի մասնակցել, նա պարտաւոր է մասնակցել:

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսի գործի գլուխ կանգնելը ամենեւին արգելափակ զարագայ լինել չի կարող մեր այլ կրօն դաւանող եղբայրների համար հայկական տպագրութեան տօնը իրենց որտե՞ս նայնչափ մօտ ընդունել, որքան ամեն մի հայ պարտաւոր է այդ անել: Եւ մենք համոզուած ենք, որ նոյեմբերի տօնը կապացուցանի մեզ, որ կրօնական տարբեր զգացումներն ու ըմբռնումները չեն կարող արգելել հայութեան ընդհանուր ջանքերով յաւերժացնելու այն մեծ տօնը, որ պատմական շորագարեայ մի ամբողջ շրջան է փակելու:

Մենք կարծու՞մ ենք, որ հայկական տպագրութեան չորսհարիւրամեակը պէտք է յաւերժացնել այն կերպ ու այն ձևով—եթէ հարկաւոր տեսնուի, կարելի է և յետաձգել մի կամ աւելի տարով—որպէսզի միջոց տրուի ամբողջ հայութեան ի մի խմբուել, կենդանացնել իր բոլոր ջանքերը յաւերժացման կոթողի առաջ, որ չորսհարիւրամեակը արձանացնող այդ կոթողը նախ և առաջ լինի զուտ գրի ու գրականութեան արտադրիչ, ուր արտացոլուի հայ գրի ու գրականութեան բոլոր բարեկամների իղձերն ու ցանկութիւնները:

Տ-ին. Հայ հոգևորականութիւնը, գլուխ ունենալով Վահան վարդ. Տէր-Գրիգորեանին, Նոր-Նախիջևան քաղաքի, հայկական կրթական և բարեգործական հաստատութիւնների ներկայացուցիչները ողջունեցին Վեհափառին սայօն-վագօնու՞մ և խնդրեցին վերագարծին արժանացնել իր այցելութեան Նոր-Նախիջևան քաղաքը:

Ազատաճախից մեկնելուց յետոյ գիմաւորու՞մներ եղան Գանձակու՞մ, Եւլախու՞մ և Քիւրդամիւրու՞մ:

Մոսկուա, 2 յունիսի.—Այսօր ժամը մէկին Վեհ. Հայրապետը ժամանեց Մոսկուա:

Բեազանու՞մ գիմաւորեցին Մոսկուայի հայ հասարակութեան ներկայացուցիչները կայարանու՞մ, Գիմաւորեցին Ներսէս արքեպիսկոպոսը, տեղական հոգևորականութիւնը և զաղութների ներկայացուցիչները:

Ժամը 4-ին հասարակութեան հրաւիրանօք ճաշկերոյթ կայացաւ:

Երեկոյեան ժամը 8-ին Վեհր ուղևորուելու է Պետերբուրգ: Մոսկուայից ուղեկցելու են Պետերբուրգի հայոց եկեղ. խորհրդի անդամներ գեներալ Բաղրամեան և Մոսկուայի համախրի ներկայացուցիչներ—Մամիկօնեան և Բուդաղեան: Բացի չքախմբից Վեհափառին ուղեկցու՞մ է Ներսէս արքեպիսկոպոսը:

Պետերբուրգ, 3 յունիսի.—Այսօր առաւօտեան ժամը 9-ին ուղեկցութեամբ չքախմբի, Բեասարաբիայի թեմի Առաջնորդի, Մոսկուայի հայ հասարակցութեան ներկայացուցիչներ և Պետերբուրգի հայոց եկ. խորհրդի անդամ գեներալ Բաղրամեանի՝ Ն. Սրբութիւնը ժամանեց Պետերբուրգ:

Լիւբան կայարանու՞մ գիմաւորեց Պետերբուրգի հայոց եկեղեցիների առաջ քահանայ Տէր-Գրիգորեանը:

Նիկոյայիեան կայարանու՞մ գիմաւորեցին Պետերբուրգի հայ հասարակութեան անդամները, եկեղեցական խորհրդի ամբողջ կազմը, իսկական պետական խորհրդական պրօֆ. Վարդանեան և իսկական պետական խորհրդական Տիգրանեան:

Նորին Սրբութիւնը շնորհակալութիւն յայտնեց, օրհնեց հասարակութեանը և փակ կառքը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԴԷՊԻ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
(Քաղուած թերթերից)

Բոստով, 2 յունիսի.—Վեհափառ Կաթողիկոսը ժամանեց Բոստով առաւօտեան ժամը